# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Արարատ քաղաքային համայնքի ղեկավարի 2020թ.-ի տարեկան կատարած աշխատանքների վերաբերյալ*

Համայնքի բյուջեի 2020թ. տարեկան պլանը կատարվել է 97,8%-ով կամ այն կատարվել է 689553,1 հազ. դրամի՝ 704822,0 հազ. դրամ պլանի փոխարեն: Ըստ հարկատեսակների այն կազմել է տարեկան գույքահարկի գծով հավաքագրվել է 69871,4 հազ. դրամ կամ այն կատարվել է 99,8%-ով, որից ֆիզիկական անձանց գծով 58609,4 հազ. դրամ կամ 101 %-ով, իսկ իրավաբանական անձանց մասով՝ 11263,0 հազ.դրամ կամ 93,9 %-ով:

Հողի հարկը կատարվել է 91,4 %-ով կամ հավաքագրվել է 5528,4 հազ. դրամ: Պետտուրքերը կատարվել են 75,3 %-ով կամ 6403,0 հազ. դրամ, ն/թ նոտար՝ 77,6 %-ով կամ 5430,0 հազ. դրամ: Վարձակալությունը կատարվել է 73,5 %-ով կամ հավաքագրվել է 4870,6 հազ. դրամ:, գույքի վարձակալությունը կատարվել է 120 %-ով կամ հավաքագրվել է 755,7 հազ. դրամ: Տեղական տուրքերի գծով կատարվել է 111,4%-ով կամ հավաքագրվել է 9494,0հազ. դրամ, ն/թ

ա/ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվության համար հավաքագրվել է 2326,0 հազ. դրամ կամ 105,5 %-ով,

բ/ բացօթյա վաճառքի թույլտվությունը կատարվել է 127,5 %-ով,

գ/ արտաքին գովազդը՝ 68,2 %-ով և այլն:

Աղբահանության վճարը հավաքագրվել է 111,2 %-ով կամ 61138,0 հազ. դրամ:

Ծնողական վճարները հավաքագրվել են 39,1 %-ով կամ 18264,0 հազ. դրամ:

Օտարումից մուտքերը կատարվել է 186,6%-ով կամ 18656,1 հազ. դրամ:

1. Ենթակա կազմակերպություններին է ուղղվել մոտ 268000,0 հազ. դրամի աշխատավարձ:
2. Փողոցների լուսավորության համար տարեկան ծախսվել է 6523,6 հազ. դրամ էլ.հոսանք: Ձեռք է բերվել 21 հատ LAD էլ.լամպեր կամ 1979,0 հազ.դրամի:
3. Կատարվել են բակային արտաքին լուսավորության աշխատանքներ 2077,0 հազ. դրամի:
4. Նախադպրոցական կրթությանն է տրամադրվել 179669,8 հազ. դրամ
5. Արտադպրոցական դաստիարակությանն է ողղվել 106359,0 հազ. դրամ:
6. Մշակույթի տանն է ուղղվել 35545,0 հազ. դրամ:
7. Անապահով ընտանիքների բարձրագույն կրթություն ստացող ուսանողների ուսման վարձ է տրվել 875,0 հազ. դրամ՝ 18 ուսանողի համար:
8. Անապահով ընտանիքների միջնակարգ մասնագիտական կրթություն ստացող ուսանողների ուսման վարձ է տրվել 140,0 հազ. դրամ՝ 6 ուսանողի համար:
9. Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1335,0 հազ. դրամի դրամական օգնություններ: Հուղարկավորություններին է ուղղվել 1500,0 հազ. դրամ:
10. Արարատ քաղաքի անապահով ընտանիքների ուսանողներին տրամադրվել է ուսանողական ավտոբուս, որի ծառայությունները կազմել է 512,0 հազ. դրամ:
11. Արարատ քաղաքի հրապարակի կանաչապատման և բույսերի ձեռքբերման համար ծախսվել է 1950,0 հազ.դրամ:
12. Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին և արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին տրամադրվել է 330,0 հազ. դրամի օգնություն:
13. Ձեռք է բերվել գոֆրե խողովակ 840,0 հազ.դրամ արժողությամբ, որը օգտագործվել է ՈԿՖ բանավանի դրենաժային համակարգից ջրերի հեռացման համար:
14. Նախորդ տարվա ասֆալտապատման աշխատանքների համար վճարվել է 1641,0 հազ.դրամ որպես պարտք:

15. Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կատարվել համայնքապետարանի շենքի ջրհորդանի տեղադրման 921,3հազ. դրամ:
16. Կոմունալ տնտեսությանն է ուղղվել մոտ 136547,3 հազ. դրամ:
17. Կապիտալ վերանորոգվել է 3-րդ մանկապարտեզ տանիքը՝ 2950,0 հազ.դրամի:
18. Ասֆալտապատվել են փողոցներ և բակային տարածքներ 82703,0 հազ.դրամի:
19. Ջրամատակարարման խողովակները կառուցվել են 1700,0 հազ.դրամի:
20. Վերանորոգվել են տանիքները 21260,0 հազ.դրամի /3 բարձրահարկ շենքեր/:
21. Որոգման ցանցի աշխատանքները կատարվել են 3274,4 հազ.դրամի:
22. Փողոցների պահպանման և շահագործման համար /անվտանգության գծեր/ 1500,0 հազ.դրամի:
23. Իրականացվել են ամրացման աշխատանքներ Արովյան 12 շենքում 4187,8 հազ.դրամի:
24. Կառուցվել են երկու խաղահրապարակներ 4207,5 հազ.դրամի:
25. Փոխվել է 4-րդ մանկապարտեզի երկհարկանի մասնաշենքի դուռը և պատուհանները 5650,0 հազ.դրամ:

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱՅԿՅԱՆ